ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

24.07.2020 թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/40-3
ապրանքի մատակարարման պայմանագրի

ք. Երևան «10» օգոստոս 2020թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Զ. Եղիազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 24.07.2020թ-ին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/40-3 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N1-ի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» աղյուսակի «Ժամկետը» սյունակում ներկայացված նախադասությունը, այն է՝ *«Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո՝ մինչև ս.թ. սեպտեմբերի 30»*, շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝ *«Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո՝ մինչև ս.թ. հոկտեմբերի 30»*:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «ՌեՖորս Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | ք. Երևան, Գ.Լուսավորիչ 7/1 |
| ՀՎՀՀ՝ 00000911 | ՀՎՀՀ՝ 00179816 |
| Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ | Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 163007096304 | Հ/Հ՝ 1570030830430100 |
| Տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյան | Տնօրեն՝ Զ. Եղիազարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |